ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 03.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/17

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 09.02.2017թ. թիվ 03/26-3/2182-18 գրությամբ «Վիոլա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.02.2018թ. թիվ ԴՎԱ/437 գրության հիման վրա, 09.02.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Վիոլա» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 06.02.2018թ. թիվ ԴՎԱ/437 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Վիոլա» ՍՊԸ-ի միջև 18.08.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-9/16-3 ծածկագրով գնման պայմանագրի 3.1.7 կետը, 3.1.7.1 կետի «բ» ենթակետը, ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. հունվարի 29-ից միակողմանի «Պլազմաֆերեզի MCS+9000 System ապարատի համար դոնորական թրոմբոցիտոֆերեզի սիստեմա REF 995E; Haemonetics» ապրանքատեսակի մասով լուծել է վերը նշված պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 05.02.2018թ. ուղարկվել է մասնակցի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>«Վիոլա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Վիոլա» ՍՊԸ-ն Խորհրդին ուղղված 20.02.2018թ. գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Վիոլա» ՍՊԸ-ի միջև 18.08.2017թ. կնքվել է ծառայությունների մատուցման N ՇՀԱՊՁԲ-9/16-3 ծածկագրով պայմանագիր:

N ՇՀԱՊՁԲ-9/16-3 ծածկագրով գնման պայմանագրի համաձայն՝ «Վիոլա» ՍՊԸ-ն ի թիվս այլ ապրանքատեսակների, պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ, քան մինչև 30.11.2017թ. մատակարարել 30 հատ «Պլազմաֆերեզի MCS+9000 System ապարատի համար դոնորական թրոմբոցիտոֆերեզի սիստեմա REF 995E; Haemonetics»՝ 1,668,000 (մեկ միլիոն վեց հարյուր վաթսունութ հազար) ՀՀ դրամ ընդհանուր գնով:

«Վիոլա» ՍՊԸ-ն 26.12.2017թ. «Դելռուս» ՓԲԸ-ի կողմից ստացել է գրություն, ըստ որի «Դելռուս» ՓԲԸ-ն հայտնել է, որ «Պլազմաֆերեզի MCS+9000 System ապարատի համար դոնորական թրոմբոցիտոֆերեզի սիստեմա REF 995E; Haemonetics» ապրանքի արտադրության աշխատանքները կանգնեցվել են և այլևս չի արտադրվում:

Հիմք ընդունելով վերոնշյալ գրությունը՝ «Վիոլա» ՍՊԸ-ն 26.12.2017թ. ՀՀ պաշտպանության նախարարությանը թիվ 72/2017 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Դիմում եմ Ձեզ 18.08.2017թ. կնքած N ՇՀԱՊՁԲ-9/16-3 պայմանագրի շրջանակներում «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ՊՆ Ռազմաբժշկական վարչության Արյան Բանկի MCS+9000 System պլազմաֆերեզի ապարատի համար ծախսվող պարագաների մատակարարման առնչությամբ: Նշյալ պարագաների մատակարար ընկերություն է հանդիսանում Ռուսաստանի Դաշնության «Դելռուս» ՓԲԸ-ն, որը հանդիսանում է արտադրող ամերիկյան ընկերության (Haemonetics Corp., ԱՄՆ) պաշտոնական ներկայացուցիչը Անկախ Պետությունների Դաշնության (ՀԻԳ) երկրներում: «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից իրականացվել են վերոնշյալ պայմանագրում նշված բոլոր ապրանքների մատակարարումը, բացի հետևյալ ապրանքից՝ չափաբաժին 5 «Պլազմաֆերեզի MCS+9000 System ապարատի համար դոնորական թրոմբոցիտոֆերեզի սիստեմա REF 995E; Haemonetics» 30 հատ: Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Վիոլա» ՍՊԸ-ն չի կարողացել իրականացնել այդ ապրանքի մատակարարումը՝ ընկերությունից անկախ (ֆորս մաժորային) պատճառներով, քանի որ միայն պատվերը տալուց հետո պարզվել է, որ տվյալ սիստեմայի արտադրությունը դադարեցվել է արտադրող ընկերության կողմից և համարժեք փոխարինում գոյություն չունի: Նշեմ նաև, որ մրցույթի հայտի ներկայացման պահին (30.03.2017թ.) այդ ապրանքը հնարավոր է եղել պատվիրել:

Սակայն ՀՀ պաշտպանության նախարարությունը, հաշվի չառնելով Ընկերության կողմից ներկայացված գրությունը՝ 29.01.2017թ. միակողմանի լուծել է պայմանագիրը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 02.02.2018թ. ԴՎԱ/398 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Վիոլա» ՍՊԸ-ի միջև 18.08.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-9/16-3 ծածկագրով գնման պայմանագրի համաձայն, Ձեր ընկերությունը ի թիվս այլ ապրանքատեսակների՝ պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը մինչև 30.11.2017թ. մատակարարել 30 հատ «Պլազմաֆերեզի MCS+9000 System ապարատի համար դոնորական թրոմբոցիտոֆերեզի սիստեմա REF 995E; Haemonetics»՝ 1,668,000 (մեկ միլիոն վեց հարյուր վաթսունութ հազար) ՀՀ դրամ ընդհանուր գնով: Հիմք ընդունելով վերը նշված պայմանագրի 3.1.7 կետը, 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. հունվարի 29-ին միակողմանի՝ «Պլազմաֆերեզի MCS+9000 System ապարատի համար դոնորական թրոմբոցիտոֆերեզի սիստեմա REF 995E; Haemonetics»՝ ապրանքատեսակի մասով լուծում է N ՇՀԱՊՁԲ-9/16-3 ծածկագրով պայմանագիրը: Տեղեկացնում եմ, որ «Վիոլա» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին որպես տույժ փոխանցել 40,866 (քառասուն հազար ութ հարյուր վաթսունվեց) ՀՀ դրամ՝ մատակարարման ժամկետների խախտման համար (պայմանագրի 7.2 կետի համաձայն):

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Վիոլա» ՍՊԸ-ից կգանձվի նաև վերը նշված պայմանագրի կատարման ապահովման գումարը, որը կազմում է 343,540 (երեք հարյուր քառասուներեք հազար հինգ հարյուր քառասուն) ՀՀ դրամ:»:

Այսպիսով, ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. հունվարի 29-ին միակողմանի մասնակի լուծել է N ՇՀԱՊՁԲ-9/16-3 ծածկագրով պայմանագիրը՝ «Պլազմաֆերեզի MCS+9000 System ապարատի համար դոնորական թրոմբոցիտոֆերեզի սիստեմա REF 995E; Haemonetics» ապրանքատեսակի մասով:

Համաձայն N ՇՀԱՊՁԲ-9/16-3 ծածկագրով պայմանագրի Հավելված 2-ի՝ գնման ժամանակացույցի, նշված ապրանքատեսակի համար «Պլազմաֆերեզի MCS+9000 System ապարատի համար դոնորական թրոմբոցիտոֆերեզի սիստեմա REF 995E; Haemonetics»

մատակարարման ժամկետ է սահմանվել 4-րդ եռամսյակը, բայց ոչ ուշ, քան մինչև 30.11.2017թ.:

Այսիսով, վերոհիշյալից բխում է, որ «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից, ըստ էության, մեկ անգամ խախտվել է պայմանագրով նախատեսված մեկ պարտավորությունը, այն է՝ 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ, քան մինչև 30.11.2017թ. չի մատակարարել «Պլազմաֆերեզի MCS+9000 System ապարատի համար դոնորական թրոմբոցիտոֆերեզի սիստեմա REF 995E; Haemonetics» ապրանքը, ինչը հանգեցրել է պատվիրատուի կողմից այդ մասով պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ N ՇՀԱՊՁԲ-9/16-3 ծածկագրով պայմանագիրը կնքվել է ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16– ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի արդյունքում, իսկ նշված ընթացակարգի հրավերը հաստատվել է գնահատող հանձնաժողովի կողմից 2017թ. մարտի 21-ի թիվ 1 որոշմամբ:

Իսկ ինչպես հայտնի է, «Գնումների մասին» 2016թ. դեկտեմբերի 16-ին ընդունված օրենքը ուժի մեջ է մտել 2017թ. ապրիլի 25-ից, այսինքն ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16– ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16 ծածկագրով ընթացակարգը հայտարարելուց հետո:

Մինչդեռ, «Գնումների մասին» 2016թ. օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նշված օրենքի պահանջները չեն տարածվում մինչև տվյալ օրենքն ուժի մեջ մտնելն սկսած և չդադարած, ինչպես նաև կնքված և գործող գնման գործարքների վրա, իսկ դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների կնքման պահին գործող իրավական ակտերով:

Այլ կերպ ասած, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16– ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16 ծածկագրով ընթացակարգի հետ կապված հարաբերությունները առաջացել են մինչև «Գնումների մասին» 2016թ. ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը, ուստի ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16– ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16 ծածկագրով ընթացակարգի հետ կապված հարաբերությունները, այդ թվում նաև այդ ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի վրա տարածվում են «Գնումների մասին» 2010թ. ՀՀ օրենքի կարգավորումները:

Հայտնի է, որ «Գնումների մասին» 2010թ. ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում՝ ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսիսով, որպեսզի «Վիոլա» ՍՊԸ-ն ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, «Գնումների մասին» 2010թ. ՀՀ օրենքի համաձայն՝ անհրաժեշտ է, որպեսզի ընկերությունը հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի, քան մեկ անգամ խախտի պայմանագրով նախատեսված պարտավորություն և այնուհետև ներկայացնի հայտ: Մինչդեռ ինչպես երևում է վերը շարադրված փաստերից, «Վիոլա» ՍՊԸ-ն թույլ է տվել պայմանագրով նախատեսված ընդամենը մեկ խախտում, այն է՝ 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ, քան մինչև 30.11.2017թ. չի մատակարարել ընթացակարգի «Պլազմաֆերեզի MCS+9000 System ապարատի համար դոնորական թրոմբոցիտոֆերեզի սիստեմա REF 995E; Haemonetics» ապրանքը, ինչը հանգեցրել է պատվիրատուի կողմից այդ մասով պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը:

Գտնում ենք, որ նման պայմաններում առկա չէ «Վիոլա» ՍՊԸ-ին «Գնումների մասին» 2010թ. ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում թույլ տալու հիմքով վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքը:

Պետք է նշել, որ նման հիմքերով պաշտոնական ընթացակարգեր քննելիս՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը նույնպես հանգել է այս դիրքորոշմանը:

Այսպես, 14.11.2017թ. կայացրած ՍՑ-ԷՍ-2017/57 որոշմամբ, ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը արձանագրել է, որ «Մակսիմ» ՍՊԸ-ն 2-րդ եռամսյակում չի մատակարարել 500 հատ ձայներիզ, բայց միևնույն ժամանակ արձանագրել է, որ առկա չէ «Գնումների մասին» 2010թ. ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, և այդ հիմքով մերժել մասնակցին գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնած պաշտոնական ընթացակարգը:

Միևնույն ժամանակ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրում ենք հաշվի առնել այն հանգամանքը, որ «Պլազմաֆերեզի MCS+9000 System ապարատի համար դոնորական թրոմբոցիտոֆերեզի սիստեմա REF 995E; Haemonetics» ապրանքի մատակարարումը չկատարելը իրականում պայմանավորված է եղել միայն նրանով, որ տվյալ ապրանքի արտադրությունը դադարեցվել է արտադրող ընկերության կողմից և համարժեք փոխարինում գոյություն չունի, հակառակ դեպքում «Վիոլա» ՍՊԸ-ն պատշաճ կկատարար նաև պայմանագրային այդ պարտավորությունը:

Գտնում ենք, որ «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից թույլ է տրվել «Գնումների մասին» 2010թ. ՀՀ օրենքով նախատեսված միայն մեկ խախտում, այն է՝ 4-րդ եռամսյակում չի մատակարարել «Պլազմաֆերեզի MCS+9000 System ապարատի համար դոնորական թրոմբոցիտոֆերեզի սիստեմա REF 995E; Haemonetics» ապրանքատեսակը, ինչը բավարար չէ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Ընկերության կողմից լիազորված ներկայացուցիչներ Արթուր Պարանյանը և Հասմիկ Ենգոյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/17 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 09.02.2017թ. թիվ 03/26-3/2182-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.02.2018թ. թիվ ԴՎԱ/437 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության և «Վիոլա» ՍՊԸ-ի միջև 18.08.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-9/16-3 ծածկագրով գնման պայմանագիրը, Պատվիրատուի՝ «Վիոլա» ՍՊԸ-ին ուղղված 02.02.2018թ. թիվ ԴՎԱ/398 գրությունը, «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից 26.12.2017թ. Պատվիրատուին ուղղված գրությունը, «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից 20.02.2018թ. Խորհրդին ուղղված գրավոր դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Վիոլա» ՍՊԸ-ի միջև 18.08.2017թ. կնքվել է N ՇՀԱՊՁԲ-9/16-3 ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար (հավելված N 3):
- 3.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:
- 3.1.7.1 կետի բ) ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Պայամանգրի Հավելված 2-ով նախատեսված գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է 2017թ. 3-րդ եռամսյակում մատակարարել թվով 100 հատ «Պլազմաֆերեզի MCS+9000 System ապարատի համար դոնորական պլազմաֆերեզի հակամակարդիչ լուծույթ Natrii Citrati 4% 250մլ. Pharma Tech», 4-րդ եռամսյակում՝ 100 հատ «Պլազմաֆերեզի MCS+9000 System ապարատի համար դոնորական պլազմաֆերեզի սիստեմա REF 620; Haemonetics», «Պլազմաֆերեզի MCS+9000 System ապարատի համար դոնորական պլազմաֆերեզի սիստեմա REF 0625B-00; Haemonetics», «Պլազմաֆերեզի MCS+9000 System ապարատի համար դոնորական պլազմաֆերեզի տոպրակ 1 լիտրանոց՝ REF 692; Haemonetics», 130 հատ «Պլազմաֆերեզի MCS+9000 System ապարատի համար դոնորական պլազմաֆերեզի ասեղ 16Gx1''BE W/CLAMP; Haemonetics» և 30 հատ «Պլազմաֆերեզի MCS+9000 System ապարատի համար դոնորական թրոմբոցիտոֆերեզի սիստեմա REF 995E; Haemonetics»:

«Վիոլա» ՍՊԸ-ն 26.12.2017թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Դիմում եմ Ձեզ 18.08.2017թ. կնքած ՇՀԱՊՁԲ-9/16-3 պայմանագրի շրջանակներում «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ՊՆ Ռազմաբժշկական վարչության Արյան Բանկի "MCS+9000 System" պլազմաֆերեզի ապարատի համար ծախսվող պարագաների մատակարարման առնչությամբ: Նշյալ պարագաների մատակարար ընկերություն է հանդիսանում Ռուսաստանի Դաշնության «Դելռուս» ՓԲԸ-ն, որը հանդիսանում է արտադրող ամերիկյան ընկերության (Haemonetics Corp., ԱՄՆ) պաշտոնական ներկայացուցիչը Անկախ Պետությունների Դաշնության (ՀՊԳ) երկրներում:

«Վիոլա» ՍՊԸ-ի կողմից իրականացվել են վերոնշյալ պայմանագրում նշված բոլոր ապրանքների մատակարարումը, բացի հետևյալ ապրանքից՝ չափաբաժին 5 «Պլազմաֆերեզի MCS+9000 System ապարատի համար դոնորական թրոմբոցիտոֆերեզի սիստեմա REF 995E; Haemonetics» 30 հատ:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Վիոլա» ՍՊԸ-ն չի կարողացել իրականացնել այդ ապրանքի մատակարարումը՝ ընկերությունից անկախ (ֆորս մաժորային) պատճառներով, քանի որ միայն պատվերը տալուց հետո է պարզվել, որ տվյալ սիստեմայի արտադրությունը դադարեցվել է արտադրող ընկերության կողմից և համարժեք փոխարինում գոյություն չունի: Նշեմ նաև, որ մրցույթի հայտի ներկայացման պահին (30.03.2017թ.) այդ ապրանքը հնարավոր է եղել պատվիրել:»

Պատվիրատուն 02.02.2018թ. թիվ ԴՎԱ/398 գրությամբ «Վիոլա» ՍՊԸ-ին՝ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Վիոլա» ՍՊԸ-ի միջև 18.08.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-9/16-3 ծածկագրով գնման պայմանագրի համաձայն, Ձեր ընկերությունը ի թիվս այլ ապրանքատեսակների՝ պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը մինչև 30.11.2017թ. մատակարարել 30 հատ «Պլազմաֆերեզի MCS+9000 System ապարատի համար դոնորական թրոմբոցիտոֆերեզի սիստեմա REF 995E; Haemonetics»՝ 1.668.000 (մեկ միլիոն վեց հարյուր վաթսունութ հազար) ՀՀ դրամ ընդհանուր գնով:

Հիմք ընդունելով վերը նշված պայմանագրի 3.1.7 կետը, 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. հունվարի 29-ից միակողմանի՝ «Պլազմաֆերեզի MCS+9000 System ապարատի համար դոնորական թրոմբոցիտոֆերեզի

սիստեմա REF 995E; Haemonetics» ապրանքատեսակի մասով լուծում է N ՇՀԱՊՁԲ-9/16-3 ծածկագրով պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Վիոլա» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված 900005028106 հաշվեհամարին որպես տույժ փոխանցել 40.866 (քառասուն հազար ութ հարյուր վաթսունութ) ՀՀ դրամ՝ մատակարարման ժամկետների խախտման համար (պայմանագրի 7.2 կետի համաձայն):

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Վիոլա» ՍՊԸ-ից կգանձվի նաև վերը նշված պայմանագրի կատարման ապահովման գումարը, որը կազմում է 345.540 (երեք հարյուր քառասուներեք հազար հինգ հարյուր քառասուն) ՀՀ դրամ:»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ «Վիոլա» ՍՊԸ-ն չի կարողացել իրականացնել «Պլազմաֆերեզի MCS+9000 System ապարատի համար դոնորական թրոմբոցիտոֆերեզի սիստեմա REF 995E; Haemonetics» ապրանքի մատակարարումը, քանի որ «Դելռուս» ՓԲԸ-ն, որը հանդիսանում է արտադրող ամերիկյան ընկերության պաշտոնական ներկայացուցիչը, գրությամբ հայտնել է, որ նշված ապրանքն այլևս չի արտադրվում: «Վիոլա» ՍՊԸ-ն հիմք ընդունելով «Դելռուս» ՓԲԸ-ի կողմից ստացված գրությունը, 26.12.2017թ. գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը և հայտնել, որ չի կարողացել իրականացնել նշված ապրանքի մատակարարումը՝ քանի որ միայն պատվերը տալուց հետո է պարզվել, որ տվյալ սիստեմայի արտադրությունը դադարեցվել է արտադրող ընկերության կողմից և համարժեք փոխարինում գոյություն չունի: Այնուամենայնիվ ՀՀ պաշտպանության նախարարությունը հաշվի չառնելով Ընկերության կողմից ներկայացված գրությունը 29.01.2017թ. միակողմանի լուծել է պայմանագիրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից

հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Այսպիսով Խորհուրդն արձանագրում է, որ N ՇՀԱՊՁԲ-9/16-3 ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված՝ 30 հատ «Պլազմաֆերեզի MCS+9000 System ապարատի համար դոնորական թրոմբոցիտոֆերեզի սիստեմա REF 995E; Haemonetics» ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից չի մատակարարվել:

Խորհուրդը գտնում է, որ «Վիոլա» ՍՊԸ-ն, Պայմանագրով նախատեսված «Պլազմաֆերեզի MCS+9000 System ապարատի համար դոնորական թրոմբոցիտոֆերեզի սիստեմա REF 995E; Haemonetics» ապրանքը սահմանված ժամկետում չմատակարարելով՝ խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունը, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Վիոլա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Խորհրդին ներկայացված պաշտոնական ընթացակարգով առկա չէ որևէ տեղեկատվություն կամ ապացույց այն մասին, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու նախորդող տարվա ընթացքում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված որևէ խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Վիոլա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.02.2017թ. «Վիոլա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ